

վորական ընթացքը չը պէտք է փոխուի, կոտորածը պէտք է շարունակուի մինչև վերջին շունչը մեր դարը պէտք է փակուի այս ամօթով: Այն քեզ, քաղաքակիրթ աշխարհ:

(Ապա թուում նորագոյն քառամենի դէպքերը):

Տաճկաց տէրութիւնն աշխատում է ահ ձգել այն դադթական հայերի սրտի մէջ, որոնք Ռուսաստանում երազում են դառնալ իրենց նախկին հայրենիքը:—Ոչ թէ հարկը հազար, այլ միլիոն է սպանուել և մարտիրոսացել, և այս բոլորը կատարուել է և կատարվում է Եւրոպայի աչքի առաջ: Շատերն իբրև միեմարանք ասում են, թէ հալածանքը քրիստոնէութեան դէմ է: Բայց այս ոխալ է. հալածվում է ոչ թէ քրիստոնէան, այլ հայն: Ասորաց աշխատում են հայերի տեղ մուսուլմաններ ընտելեցնել:

Անտեղեակ Եւրոպան կարծում է, թէ Հայաստանը ապստամբել է և իւր խռովութեան պատճառով պատժվում է: Այս էլ ազդեղ ստութիւն է. Բոլոր ականաաւեսները վիայում են, որ հայերը լաւ առարկնութիւններ ունին, մարմնով և հոգով ազնիւ ազդ են. հայն ազդատէր է սիրում է, ընտանիք, հայրենիք, կրօն: Վերջովը խնտ ոգևորուած գոյել է այդ ազգի բարձր հոգեկան բարեմասնութիւնները, որ երեւում են զարգացման ամենայն ճիւղերում, Խայտառակութիւն է, որ այսպէս ազգը անյոյս ինքնապաշտպանութեան զխնջու հարկադրվում է. այս քմբոստութիւն չէր, այլ լոկ պաշտպանութիւն անձի. և մեղաւորը մեշտ տաճիկն է եղել: Սուլթանը երկիւղի մէջ է. հասկանալի է, որ նա օր ու գիշեր պէտք է դողայ, որովհետև գիտէ իւր նախորդների վիճակը, գիտէ և իւր արածներն իւր երկրում... Իսկ ուր է աշխարհում այն բարձր, ուր որ այդ գլուխը կարողանար հանգիստ դանել...:

Իւսն Տուրքենե, լաւ է որ գերեզման ես մտել առաջ, քան Եւրոպայի մասին տաճած հաւատդ կը ստուէր: Եթէ այժմ ապրէիր քո սիրած Փարիզում, միթէ դարձեալ նոյն հաւատը կունենայիր և ազնիւ գլուխդ կը խոնարհէիր ցուցամու աշխարհահանդիսի առաջ, Գու կը լսէիր այս կոտորածի աղաղակը, քո առջև աներեւոյթ թաթով կը գրուէր Մանէ, Մանէ, Թեկեզ ու Փարսին: և ոչ օր չէր կարողանայ մեկնել դրի գորութիւնը. դու կը տեսնէիր կանգնած տաճարներ—թղթից շինած, որ այսօր կառուցանվում են, վաղը ծխի մէջ են, և ամէնքը փախչում են այդ տաճարներից... դու կը հաստատէիր արիւն, իշխանների ոտի տակ արիւն, ամէն տեղ արիւն:—

Եթէ կարողանանք գէթ մի օր զարթեցնել Եւրոպայի ժողովրդեան, որ իմանայ, թէ ինչ և

ինչպէ՞ս է կատարուել, այն ժամանակ այս մեծ գայթակղութիւնը կը ծնանի դայրոյթ, առեւտրութիւն, այն ժամանակ վրէժինդեր հրեղէն սուրը կը շողշողայ և շատ դոհեր ոտքի տակ կը դնէ:

Բայց մենք, որ առեւտրութիւն չենք սիրում, որ չենք հաւատում թէ լաւ կարգը շարութեան վերայ է հաստատվում, լոկ միայն ուղում ենք ազգերի ականջին դռնել. «բաց արէ՛ք ձեր աչքերը և նայեցէ՛ք ձեր շուրջը»: պահանջել ապաշխարութիւն, զոյժումն, որ ահամայ մասնակից դառանք այս ամօթոյ խայտառակութեան մէջ, պահանջել օգնութիւն, անպայման և անկեղծ օգնութիւն Հայաստանի կենդանի մնացած մեր եղբայրների համար: օգնութիւն ամենայն դնով, որպէս զի ինչ սխալ որ երէկ գործել է քաղաքակիրթ Եւրոպան, այս օր պարտք համարէ լինուի ուղղել: Ամէն:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Հ Ի Ն Ց Ա Ւ .

Այս վերնագիրն ունի մի փոքրիկ զարդոյկ, որի մէջ ամփոփել եւ մօտ օրերս լոյս է ընծայել իւր «Տրապարակախօսական խոհերը» պ. Լ. Սարգսեան: Մենք առանձնապէս շնորհապարտ ենք պ. Սարգսեանին, որ այդպէս թանգ է գնահատում իւր «խոհերը» եւ թոյլ չի տալիս օրաթերթի վաղանցուկ էջերի մէջ փայլին մի քանի ժամ եւ մոռացուին անհետ, այլ ներկայացնելով ընթերցող հասարակութեան երկրորդ անգամ աւելի երկարակեաց պատեանի մէջ եւ իբրև մի կապակցեալ ահողջութիւն՝ առիթ է ընծայում նոր ի նորոյ գմայելու, նորանոր մեծ մտքեր քաղելու նոցա իմաստութեան բովից: Մենք շնորհապարտ ենք ո՛չ միայն նորա համար, որ պատճառ ունինք աւելի քան ուրիշ որ հետաքրքրուելու պ. Սարգսեանի վերականգնեցրած «հին ցաւ»ով, այլև որ նորա «խոհեր»-ի մէջ, աւելի զուցէ քանի ուրիշ տեղ, կենդանի կերպով պատկերացած ենք զրոնում մի ուրիշ հնաշաբէ շաւ, ո՛չ պակաս ու-

շաղրութեան արժանի, այն է՝ հայ ժողովրդի ցաւերն ըմբռնելու եւ բուժելու նկատմամբ մեր հրապարակախօսանքի յաճախ ցոյց տուած ծայրահեղ անընդունակութիւնը: Պ. Սարգսեան ներկայ տետրակի մէջ շատ քան է ասում որոնց պատասխանը պարտաւոր էինք առաջ տալ, երբ նորա խոհերն առանձին առանձին լոյս էին տեսնում, ըայց ինչ ինչ հանգամանքներ խանգարել են. կաշխատենք այժմ՝ երկրորդական կէտեր մի կողմ՝ թողած՝ ընդհանուր գծերով պարզել, թէ ինչպէս են վերաբերուում դէպի «հին ցաւը» պ. Ս. եւ իւր նաան քաջ հրապարակախօսներ, եւ ինչպէս ենք վերաբերուում մենք՝ «ս. էջմիածնի անշնորհք աստուածաբաններ»:

Այն հին ցաւը, որի մասին խօսում է պ. Ս., հայոց հոգեւորականութեան անկեալ վիճակն է: Նա այն է՝ Կ. Պոլսից չէ, որոնք առհասարակ հոգեւորականութեան գոյութեան իրաւունքը չեն ճանաչում ու նաեւ հայ հասարակութիւնից պահանջում են «մի կողմ՝ նետել կղերի հարցը, նա համոզուած է, որ ոչ միայն քահանան, այլ նաեւ «ներկայ մեր պայմաններում» վեղարը կարող է մեծ ծառայութիւն մատուցանել մեր ժողովրդին», ուրեմն եւ մենք իրաւունք ունինք սպասելու նորանից, որ միջոցներ ցոյց տայ, թէ ի՞նչպէս պէտք է վեղարն ու ամբողջ հոգեւորականութիւնը իւր կոչման քարճրութեան հասցնել:» ըայց նա քաւականանում է միայն չափազանց յառաջադէմ՝ հակակղերականների դէմ՝ սնդեղով: Թէ անտարբեր չէ մեզ համար հոգեւորականների լաւ կամ վատ լինելը, ուստի պէտք է աշխատել լաւ հոգեւորականներ ունենալ, որոնք ինչպէս որոնք ապաւինելու ենք, որ նա չէ ասում: միայն մի պայման է դրնում՝ լաւերի շարքն անցնել կամեցող հոգեւորականի առաջ — «հրաժարուել դասակարգային շահերից եւ ...»:

Անփորձ ընթերցողին տարօրինակ կթուի անշուշտ խնդրի այսպիսի ձեւակերպութիւնը, սակայն առանց պատճառի չէ այդ. պ. Ս. վերացական տեսութիւններով չէ խօսում: այլ աչքի առաջ ունի մեր կեանքի իրականութիւնը. նա չի կարող ուրանալ, որ վերջին ժամանակ փորձեր են եղել նոր հոսանք

մտցնելու մեր հոգեւորականութեան մէջ. ըայց որովհետեւ նորա կարծիքով այդ «արուեստական հոսանք»-ը, որ սկսուեցաւ «Մակար կաթողիկոսի օրով էջմիածնում», աստուածաբան Օրմանեանի օրհնութեամբ, յառաջ է քերել մի «կղերական գերիշխանութիւն քարոզող նոր սերունդ», ըողորովին անհամապատասխան մեր ժողովրդի պահանջներին՝ ուստի նորա քանակութիւն ուղղուած է զլիարարապէս այդ նոր սերունդի դէմ: եւ մենք քաղդ ունենալով անդրանիկ ներկայացուցիչը լինելու նոյն սերունդի եւ միաժամանակ առաջին «աստուածաբանը», պարտաւորուած ենք զգում՝ ելնելու մեր դէմ՝ քարոզուած մեղադրանքի տակից՝ հարցնելով. մեր եւ որտեղ ենք մենք կղերական գերիշխանութիւն քարոզել. ի՞նչ վնաս է քերել Հայոց եկեղեցուն կամ՝ հայ ժողովրդին մեր աստուածաբանութիւնը: Եւ քաւի առաջին անգամը չենք այդ հարցը տալիս, ըայց մենք զործ ունինք այնպիսի ընդդիմախօսների հետ, որոնց զլիսի մէջ մեխուածը հատորներ գրելով, լոյսի պէս պայծառ փաստերով իսկ հանել կարելի չէ:

Եւրոպական ժողովուրդների կեանքում այժմ վայրենութիւն կհամարուէր վիճել թէ ազնիւ, կրթված հոգեւորականը աւելի օգտակար է, քան տգէտն եւ շարագործը — այդ դուք էք ասում չէ՞, պ. Ս. իսկ ի՞նչ էք կարծում: ի՞նչ կհամարուի նոյն եւրոպական ժողովուրդների կեանքում վիճել, թէ հոգեւորականի համար կարեւոր է արդեօք եւ օգտակար աստուածաբանութիւն ուսանել: — Դադատոնի մոքով անգամ չէր կարող անցնել, որ իրան կմեղադրեն, թէ ինչու իր ազնիւ, կրթված որդին քահանայութիւն է անում, կղերական է. շատ ճշմարիտ է. ըայց ի՞նչ կմտածէր նոյն Դադատոնը, եթէ Դուք պահանջէիք, որ նորա «ազնիւ, կրթված որդին» հրաժարուի աստուածաբանութիւնից, որպէս զի կարողանայ լաւ քահանայութիւն անել եւ իւր ժողովուրդին ծառայութիւն մատուցանել. եթէ դատաւարտէք նոյն ինքն աշխարհաշողջակ մեծ Դադատոնին, որ իւր թանկագին ժամերից այնչափ շատ աստուածաբանական գրքեր կարդալու եւ գրելու է նուիրել: Թէ Դուք գուցէ չգիտէք, որ «Եւրոպական ժողո-

վորդների կեանքում» ո՛չ մի հոգեւորական չկայ առանց աստուածաբանութիւն ուսած լինելու. ինչ էք կարծում, որն է այն «անհրաժեշտ հմտութիւնը», որ կարելոր է համարուում այստեղ հոգեւորականի «մասնագիտական գործունէութեան համար». կարող էք հաւատացած լինել, որ Գլադստոնի «ազնիւ եւ կրթուած որդին» ինչպէս եւ Եւրոպայի Չերքոլոր փառաքանած հոգեւորականները՝ աստուածաբանութիւնն են համարել եւ այն էլ ուսել են: Եւ նորա բողոքեքեան Չեզ կասեն, թէ աստուածաբանութիւնը «միտաֆիզիկական փիլիսոփայութիւն է» այն պինդ գրութիւնների համար միայն, որոնք համալսարանական կրթութիւն ունենալով հանդերձ չիմացած քանի մասին դատողութիւն տալուց չեն քաշուում. իրենց համար «անհրաժեշտ հմտութիւն» է եղել այն:

Սակայն կարելի է «Արարատի անշնորհք աստուածաբանների» աստուածաբանութիւնն ուրիշ է, Եւրոպայինն ուրիշ.— չէ՞ որ մենք նոյն Եւրոպայում ենք ուսել, այն եւս ո՛չ թէ երկրորդական, հին, խաւարամիտ, այլ ամէնից աւելի աչքի ընկնող եւ ամենայառաջադիմական ուսուցչական մօտ. իսկ թէ ուսել ենք եւ ո՛չ կողքից միայն անցել՝ ապացոյց մեր անարժանաքար ծնողք բերած գիտական ցէնզը, որ եւրոպական աստուածաբանների մէջ իսկ համեմատաբար քչերն ունին: Այդ ցէնզին Դուք հարկաւ նշանակութիւն չէք տալիս. Դուք մտածում էք զուգէ, թէ մենք մեր ուսածը «դասակարգային շահերի» համար յեղաշրջել ենք, անգործադիր թողել, կամ թէ՛ ինչ որ Եւրոպայում հարկաւոր է, աւելորդ ընդ է եւ վստակար արգելք մեր ժողովրդի մէջ: Դուք յիրաւի անչափ միամտութեամբ ենթադրել կարող էք, թէ «Սահակները, Մեսրոպները, Ներսէսները» նորա համար «հոգեւորականութեան պարծանք» են, եւ «մի խորէն Ստեփանէ կամ Խրիմեան վարդապետ» նորա համար լաւ քարոզիչներ, որ «աստուածաբանութեան մէջ (ի պատիւ իրենց) ըրելի են»: Բայց մենք Չեզ պէս միամիտ չենք եւ չնայած մեր եւրոպական աստուածաբանութեան լեցնեցիկատի դիպլոմին՝ ամենեւին յաւակնութիւն չունենք երեւակայելու, թէ աւելի հմուտ աստուածա-

բան ենք, քան եղել են «Սահակները, Մեսրոպները, Ներսէսները», աւելի մօտ ծանօթ աստուածաշունչ ս. Գրքին (որի) եւ ո՛չ մետաֆիզիկական հարցերի շուրջ պտտում է ամբողջ աստուածաբանութիւնը) — քան «մի Խրիմեան վարդապետ»:

Թողէք ուրեմն հանգիստ աստուածաբանութիւնն եւ ուղղակի ասացէք, թէ ինչ ունիք «այն նոր տիպի աստուածաբան» — վարդապետների Դէ՛, որոնց հռչակը այնքան տխուր է. «ացաւորեցէ՛ք՝ ինչո՞ւ է տխուր եւ որքան: Դուք եւ Չերքաքեկամները սովորաբար այնպէս էք խօսում, իբր աստուածաբանների ամբողջ լեզուն կայ ս. Էջմիածնում, մինչդեռ իրողութիւնն այն է, որ ցայժմ նորա միաբաններից երկուսը միայն աստուածաբանութիւն ուսել եւ գործի մէջ են մտել: Մէկը՝ Գարեգին վարդապետ, 3 տարի առաջ է վերադարձել Եւրոպայից եւ աշխատելով աւելի քան իւր ուժերը կներէին (մասամբ այն առթիւ, որ անխոհեմութիւն է ունեցել վատ եղանակին ծիով մի յետ ընկած գիւղ քարոզութեան գնալու) հիւանդացել է. Դուք այնչափ մեծահոգի կգտնուիք անշուշտ, որ առ ժամանակ զոնէ ազատ կկացուցանէք հիւանդին այդ տխուր հռչակից: Միւսը տողերիս զրոյն է, որ համարձակութիւն ունի ուրեմն միայնակ կանգնելու Չերք անողորմ դատաստանի առաջ. ահա վեց տարի ասպարիզի վերայ է նա, իսկ Դուք իբրեւ համագիւղացի մանկութեան օրերից ի վեր ծանաչում էք Նորան. իրաւունք ունիք հետախուզելու այդ աստուածաբանի ամբողջ 34 կեանքը եւ որոնելու ցոյց տալու այն սեւ բծերը, որոնց շնորհիւ նորա հռչակը այնքան տխուր է»:

Թող քարեմիտ ընթերցողը ներէ, որ հարցը անձնականի վերայ ենք դարձնում: Մեզանում դեռ չեն սովորել անձը եւ գործը բաժանել միմեանցից եւ որովհետեւ, ինչպէս պ. Ս. ի, այնպէս եւ ուրիշ նման զրուածներում մեր խեղճ անունը կապուում է ապագայ հայ հոգեւորականութիւն պատրաստելու նշանաւոր գործի հետ՝ չէինք ցանկանայ, որ մեր եւ մեր մօտիկ ընկերների անձնական պակասութիւնների պատճառաւ գործի վարկն ընկնէր, ահա դուրա համար առաջարկում ենք որո-

չել մեր մեղքերը, որպէս զի լաւ պարգուի թէ ինչու ս. Էջմիածնում եւ Արմաշում սկսուած հոսանքը ցանկալի արդիւնք չէ ունեցել՝ արժանաւոր հոգեւորականներ յառաջ չէ բերել, եւ ինչ պէտք է անել աւելի յաջողութեամբ այդպիսի նպատակի հասնելու համար: Պ. Ս. լաւ ըմբռնում է անշուշտ այս խնդրի կարեւորութիւնը, քայց այն ամէնը ինչ որ բերում է սորա պարգաւանութեան համար՝ իւր միակողմանի եւ կարկատուն քննադրութեամբ աւելի պէտք է շփոթէ ընթերցողի միտքը: Նորա առարկութիւնների ուղի ու ծուծը այն է, թէ նոր հոսանքի մէջ կղերական ոգի է իշխում, որի կազմող տարրերն են, ինչպէս տեսանք՝ աստուածաբանութիւնը եւ դասակարգային շահերը: Առաջինի մասին վերեւ տուած քացատրութիւնները քաւական համարելով՝ երկրորդի նկատմամբ ստիպուած ենք առանց այնուայնութեան ասել, որ քացարձակ սուտ է եւ երեւակայութեան ծնունդ: Եւ եթէ պ. Ս. թոյլ կտայ, կարող ենք գուցէ մինչեւ իսկ այդ զրպարաութեան ծննդաբանութիւնը նկարագրել:—Յայտնի է, որ օրիցս 6 տարի առաջ Շուշույ թեմ. դպրանոցը զրկուեցաւ պ. Ս.-ին տեսուչ ունենալու քաղղից. այնուհետեւ հանգամանքների բերմամբ Շուշի գնաց մի անձնաւորութիւն, որ վերոյիշեալ հոսանքի մէջ առաջնորդողի դեր է կատարել, եւ թէ պէտ նա գնաց արդէն այն ժամանակ, երբ քանը քանից անցել էր, թէպէտ նա առաջ այնպիսի պայմանների մէջ էր, որ ոչ մի մասնակցութիւն պ. Ս.-ի հրաժարեցման խնդրում ունենալ չէր կարող, քայց այդ միեւնոյն է. պ. Ս.-ի երեւակայութիւնն ասում էր, թէ պէտք է ունեցած լինի, թէ մի այնպիսի համազգային աղէտ, որպիսին էր իւր հրաժարուիլը տեսչութիւնից՝ պէտք է հասարակ պատճառներից յառաջ եկած չլինի, այլ դատարիչների մի ամբողջ քանակ ունենայ իւր ետեւ. եւ ուրիշ ո՞ւմ վայել էր այդպիսի մի որոշ սկզբունքների վերայ հիմնուած դատարութիւն, եթէ ոչ «կղերական նոր սերունդին», իսկ պ. Ս., որ մի քանի շաբաթ առաջ իւր եւ իւրայինների անաշտութիւնն ու անկողմնակալութիւնը ջատագովում էր հրապարակաւ՝ այն անձնաւորութիւններից է ի-

ջօք, որ հակառակորդի նկատմամբ, լինի նա իսկական կամ՝ երեւակայական հակառակորդ՝ փաստերի ետեւից ման չի գայ. քաւական է կազմեց իւր ենթադրութիւնը եւ տեսաւ որ սագում է՝ այլեւս մեղաւոր կլինի իւր աշքում՝ ոչ միայն հակառակորդը, այլ եւ նորա քարեկամը, քարեկամի քարեկամը—ամեն որ, որ այսպէս կամ՝ այնպէս յարաբերութիւն է ունեցել նորա հետ՝ մինչեւ եօթներորդ տարունը:

Ուղիղ չէ՞ միթէ. եթէ ոչ՝ ուրախութեամբ եւ ներողութիւն խնդրելով յետ կառնենք մեր մեղադրանքը, միայն զոնէ՝ մի հատիկ փաստ բերուի, որ մենք երբ եւ իցէ «կղերական գերիշխանութիւն» քարոզել ենք, որ մի ազգային եկեղեցի կազմող հայ ժողովրդի շահերից դուրս ուրիշ շահեր պաշտպանել ենք եւ ծրգտում՝ ցոյց ենք տուել անջատուելու այդ ժողովրդից եւ առանձին դասակարգ կազմելու: Մենք հարկաւ տարբեր կերպով ենք հասկանում հոգեւորականութեան եւ ժողովրդի կատարելիք դերը «դպրոցական, եկեղեցական, քահանայական եւն», խնդիրներում՝ քան պ. Ս., եւ չէինք կամենայ, որ մեր եկեղեցական—ազգային հաստատութիւնները կամայականութեանց ազատ ասպարէզ լինին այնպիսի խեղկատակների համար, որոնք ամէն շափ ու սահման անցնող յանդգնութեամբ պնդել կարող են, թէ հոգեւորականների միջամտութիւնը ~~հոգեւորականների~~ զործում անտեղի է. քայց այդ իրաւունք չէ տալիս ամենեւին կղերական ոգի եւ ծգտման վերազրելու մեզ: Մենք երբէք կողմնակից չենք եղել ոչ հոգաբարձուներին դպրոցներից հեռացնելու, ոչ քահանայական եւ այլ խնդիրներում՝ ժողովրդի քնտրողական իրաւունքը կարճելու եւ ոչ որեւէ ուրիշ ծրագրի, որ դէմ լինէր Հայոց եկեղեցու ազգային—ժողովրդական քնաւորութեան, Մենք պաշտպանել եւ քարոզել ենք միշտ այն սկզբունքը, որ քրիստոնէական եկեղեցւոյ մէջ հոգեւորականը ոչ մի իրաւական առաւելութիւն չունի աշխարհականից, որ մեծի եւ փոքրի խտրութիւն չկայ այստեղ, այլ միակ խտրութիւնը պարտականութեան այս կամ՝ այն սահմանն է. եւ եթէ հետեւցնում ենք դորանից, որ

եկեղեցւոյ անդամ՝ չէ՝ ով ոչ մի սլարտակա-
նութիւն չի ծանաչում՝ դէպի նա եւ միայն
ընտրողական սլայքաընկերութեան ներկայանում է
իրեն իրաւատէ՞ր՝ այդ չի նշանակում, թէ
ժողովուրդի իրաւունքները ոտնակոխ ենք ա-
նում, այլ թէ սլաշտականութեան եկեղեցա-
կան համայնքի արքայական իրաւունքներն ընդ-
դէմ արտաքին շահատակութեանց:

Վեղար ծածկել ենք մենք այն հա-
մոզմամբ, որ ոչ միայն դասակարգային
շահեր, այլ առհասարակ որ եւ է շահու-
նեղիւր չի կարող կատարւած լինել նորա
հետ. եթէ մարդիկ զանազան շահերի հա-
մար ի շարն են գործ ածել այն ինքը պ.
Ս. էլ նկատում է, որ վեղարն այդտեղ մեղք
չունի. ի՞նչ նուիրական քան ի շար գործ չեն
դնում մարդիկ. մեզ դատաւարտելու համար
հարկաւոր են ապացոյցներ, թէ մեր համոզ-
ման հակառակ ենք գնացել եւ վեղարի տակ
մի շահ որոնել ենք: Գիտենք ի հարկ է, որ
պ. Ս.-ի եւ իւրայինների համար այսպիսի
դէպքում ապացոյցներ անսպակաս են: Մեզ
մեղադրում էին մի ժամանակ, թէ ժողովրդ-
դի մէջ քարոզելու չենք գնում: մի քանի տա-
րի առաջ սկսեցինք գնալ, քայքայ ամփնջապէս
մեղադրանք լսեցինք, որ գիւղերը թողած քա-
ղաք ենք գնում: գնացինք գիւղերը. այժմ էլ
մեղադրում էին թէ մեծ գիւղերն ենք գնում:
գնացինք նաեւ փոքրերն ու ամենափոքրերը
— պէտք էր ենթադրել, որ քամրասանքը կը-
դադարի վերջապէս, քայքայ ո՛չ. փառասիրու-
թեան համար գիւղերն են ընկել լսեցինք:
— Այսպէս է նաեւ պ. Ս.-ի դատողութիւնը:
Գանգատուում էին, թէ ուսեալ հոգեւորա-
կաններ չկան. եւսն ձեմարանից այդպիսի-
ները եւ դեռ արտասահման էլ գնացին կա-
տարեւագործեցին ուսումը. քայքայ դորա աս-
տուածաբաններ էին, ուսեալ չէին. հարկա-
ւոր էին իրաւաբաններ, գիւղատնտեսներ եւլն.
եղան եւ այդպիսիները. քայքայ ի՞նչ ենք լսում.
դոցա սլաշտոնները աշխարհականներն էլ կա-
րող են կատարել, ձեմարանական եւ արմաշա-
կան կրօնաւորները սլարտաւոր են Պարսկաս-
տանի, Տաճկաստանի խուլ անկիւնները գնալ
գործել: — Կարծում էք զանգատն ու մեղա-
դրանքը կվերջանայ, եթէ այդ սլահանջն եւս

կատարուի: — Ահա ինչպէս յայտնի է, արմա-
շականները ցրուած են կարեւոր սլաշտոննե-
րով Տաճկաստանի ամենահեռաւոր գաւառ-
ներում. այնպիսի խուլ անկիւններից յաճախ
նոցա հովուական այցելութիւնների լուրն է
գալիս, որոնց մասին գաղափար անգամ չու-
նի «Թիւրքաց Հայաստանի» երեսելի «Կոմիտէ».
քայքայ միեւնոյն է. հիւս. մայրաքաղաքում փա-
փուկ թիկնաթոռի վերայ քազմած շան-
թեր կարծակէ նա այնուամենայնիւ եւ կպնդէ,
թէ «Երիտասարդ արմաշականները չեն ու-
զում թողնել Բոսֆորի գեղեցիկ ափերը եւ
իրենց սլաշտելի մարմինը սլարտաւորացնող ան-
դորրութիւնը»: Ի՞նչ կարելի է ասել այդպի-
սի դատողութեան դէմ. ի՞նչ կարելի է ասել
այն մարդոց դէմ, որոնք չեն ամաշում ան-
դադար կրկնելուց, թէ մենք «հացալից սլաշ-
տոնների սիրահար լինելուն համար ենք ս-
լեջմիածնում» նստած, չնայելով որ գիտեն
կամ սլարտաւոր են իմանալ. թէ ի՞նչ գործ
ենք կատարում մենք այստեղ, ի՞նչ ոռմիկ
ենք ստանում եւ ինչպիսի կեանք վարում:

Յիրաւի այստեղ նստելով մենք գուցէ շա-
տերի առաջ հացալից սլաշտոնների ծանաւար-
հը փակում ենք, քայքայ շարաշար մեղանշած
կլինէինք մեր սլարտերի դէմ: եթէ այլ կերպ
վարուէին. Մեր հասկացողութեամբ այն «կա-
մաւոր գիւտողութիւնը, որի նպատակն է
անձնագումութեամբ նուիրել իր հօտի քարո-
րութեան համար» — ծառերով ու մեծաբան յո-
ղուածներով յառաջ չի գայ, այլ երկարատեւ,
քրտնաջան, տուկուն աշխատութիւն է սլահան-
ջում. «քրիստոնէական աշխարհայեցողու-
թեամբ» առաջնորդուած. եւ մենք կաշխատենք
հաստատ մեալ մեր տեղում, քանի դեռ
զգում ենք, որ մի որոշ քաժին ունինք այդ
կարեւոր աշխատութեան մէջ. իսկ երբ իշ-
խանութիւնը հրաժայէ «վազել այնտեղ, ուր
փոսնոց է սլաւնում ժողովուրդին, ուր մի-
թարութեան, սիրփանքի եւ խրախոյսի է կա-
րօտ ցրված ու շարդված հօտը. — թող հաւա-
տացած լինի պ. Ս., որ մի վայկեան անգամ
չենք տատամի: Ծա շատ յոռետես է «ձե-
մարանի ղեկավարների եւ նրանց «երեսելի
խմիի գործունէութեան նկատմամբ». քայքայ
կգայ օրը, եւ արդէն եկել է, երբ հրապարակի

վերայ այդ «խմբի» գործունեութեան արդիւնքն էլ կշափուի: ուրիշ քարճրագոյ խմբերինն էլ: Պ. Ս.-ին, որ երկար ժամանակ ուսուցիչ եւ տեսուչ է եղել ներքեւի չէ այնպէս կարծել տալ: իբրեւ թէ կատարեալ մարդիկ, անձնագորհ հոգեւորականներ պատրաստելը մի քաժակ ջուր խմելու նման դիւրին գործ է. իբր թէ շատ դիւրին է, այնպիսի մի ժամանակ երբ ամբողջ կրթուած երիտասարդութիւնը Բագու է վազում՝ անձնագործեան այն ուզին ներշնչել աշակերտներին, որ քոլորեքեան անխնտիր աւարտման վկայականը ստանալուն պէս Տաճկաստանի եւ Պարսկաստանի խուլ անկիւնները վազեն: Սակայն փոքր Աստուծոյ մէնք տասնեակներով կարող ենք ցոյց տալ վերջին շրջանի ձեմարմնականներ, որոնք Բագուն չէ հրապուրում, որոնք համեստ հասարակական գործիչներ են ոչ միայն մեր երկրի, այլ եւ Պարսկաստանի եւ Տաճկաստանի խուլ անկիւններում: որոնք պատրաստ են յետ ընկած զիւղերում՝ իսկ քահանայ լինելու եւ խոչընդոտների են հանդիպում: Թող պարծենայ, ով աւելին է արել, ով այնպիսի կուսակրօններ է հանդէս բերել, որոնք դպրոցական նստարաններից ելնելուն պէս ժողովուրդ հովուելու ընդունակ են լինում՝ եւ ուրիշ պատրաստութեան կարօտութիւն չունին:

Կանգ առնենք այստեղ, չափազանց շեղակարացելու համար մեր խօսքը: Թէպէտ ասելիք դեռ շատ է մնում: Մեր եզրակացութիւնն այն է, որ Հիւսիս-արեւելի ընդհանուր պահանջներ դնելով: մինչեւ այժմ՝ ձեռք առած իրական միջոցներն անտես անելով եւ երեւակայական յանցանքներ քարդելով ձեռնարկողների վերայ: Մենք ամենեւին դէմ չենք, որ հոգեւորական նոր սերունդի իւրաքանչիւր քայլը քննադատութեան ենթարկուի եւ պախարակուի ինչ որ պախարակելի է. քայց ի՞նչ բարեբար ազդեցութիւն կարող են ունենալ այն քննադատները, որոնք մի բերան պախարակում են եւ ոչ մի գովեստի ու քաջակերութեան արժանի գիծ չեն գտնում:—Մի ցուլ բժշկելու համար պէտք է նախ լուռ ուսումնասիրել նորա ծագման պատճառները. պ. Ս. եւ իւր համախոհները այդ նեղութիւնը երբեք յանձն չեն առել. մի

քանի կցկաուր տեղեկութիւնները ընդհանուր խօսքերով կապկաւած՝ ահա նոցա պատմագիտական պաշարը հայ հոգեւորականութեան անցեալի մասին—եւ ինչպիսի՞ համարձակ եզրակացութիւններ չեն հանում՝ նոցա այդ ողորմելի պաշարից: Ընդունենք սակայն, թէ նոցա եզրակացութիւններն ուղիղ են, թէ մեր հոգեւորականութեան մէջ նոր կեանք մտցնելու մինչեւ այժմ՝ եղած փորձերն եւս սխալ են եղել եւ անյաջող. ի՞նչ է արդեօք անաշատ հրապարակախօսի պարտքը. եղածը դատաւարտելով միայն քաւականանալ, թէ նոր ճանապարհներ ցոյց տալ: Երանի՜ չէր ամենախիստ կեցւով քննադատէին մեր ամէն մի արարքը, միայն թէ քննադատութեան հիմք կենդանի իրողութիւնները կազմէին: եւ ոչ կանխակալ կարծիքներ, քննադատութեան չափ՝ արդարամտութիւնն ու գործի քարոքմանը նպատակու ցանկութիւնը, եւ ոչ թէ կուսակցական նեղ ոգին, արմատացած նախապաշարմունքները: Պ. Ս. այդպիսի անաշատ քննադատ լինելուց շատ հեռու է, ուստի նորա «հրապարակախօսական խոհերը, եթէ եօթանասուն անգամ էլ տպուին՝ «հին ցաւը դարմանելուն չեն նպաստի ոչնչով:

Կ. Վ.

ՄԱՅՐ ԱԹՈՒ

Ազգիս Վեհափառ Հայրապետը իւր վերջին ճանապարհորդութիւնից ողջամբ Մայր Աթոռը ժամանելուց յետոյ մի քանի օր անցած բարեհաճեց Բիւրականի Հայրապետական ամբարանոցն երթալու, ուր սակայն երեք օր միայն մնալով վերադարձաւ ա. Սջմիածին:

Եունիսի 30-ին Սորին Սրբութիւնը ուղեկցուի եւամբ Բարեշն. Կորբիւն վարդապետի կրկին ճանապարհ ընկաւ դէպի Հաղարծին, ուր մտադիր է մնալու մի ժամանակ:

Եունիսի 29-ին, ա. Սահակ և ա. Մեսրոպի տօնի օրը, Մայր Աթոռից Օշական ուղեւորուեցաւ. Սորին Սրբութիւնը ուղեկցութեամբ միտքանութեան բազմաթիւ անդամոց: Պատարալիչն էր Հ. Խաչիկ Ժ. Վ. Դատեան: